



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 146 Զ 88 « 28 » 08 2017թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի ուսանողներին, առաջադիմության հաշվառմամբ ուսման վարձավճարի լրիվ փոխահատուցում տրամադրելու համար անցկացվող մրցույթը (ռոտացիա) կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի» 11-րդ կետի պահանջներով.

հրամայում եմ.

1. Ստեղծել Երևանի պետական համալսարանի մանդատային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

ա) Գրիգորյան Ալեքսանդր - ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր (հանձնաժողովի նախագահ),

բ) Մարկոսյան Ռուբեն - ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր,

գ) Ժամհարյան Հրանտ - ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ,

դ) Գրիգորյան Կարեն - ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ,

ե) Ավետիսյան Արմեն - ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),

զ) Վարազյան Վահագն - ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի տնօրեն,

է) Գրիգորյան Ռաֆիկ - ԵՊՀ գլխավոր հաշվապահ,

ը) Թադևոսյան Արմեն - ԵՊՀ իրավաբանական բաժնի վարիչ,

թ) Սահակյան Անահիտ - ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի պետ,

ժ) Սարգսյան Արմեն - ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ,

ժա) Գալիլանյան Ստեյլա - ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության կազմակերպական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

ժբ) Առուշանյան Կարինե - ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության կազմակերպական բաժնի ավագ տեսուչ (հանձնաժողովի քարտուղար),

ժգ) Խաչիկյան Արմեն - ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահ,

ժդ) Հակոբյան Միհեր - ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի ռեկտորի 2015թ. սեպտեմբերի 2-ի թիվ 154Ց53 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ